**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"02" դեկտեմբերի 2025թ. N 3299-Ա

# ՀՐԱՄԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 27 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 9-րդ կետի 6-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 28 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

02.12.2025

X

ԱՐՄԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

**ՆԱԽԱՐԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** Подписано: SIMONYAN ARMEN 4003890647 **Ա. ՍԻՄՈՆՅԱՆ**

Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
«  » _____ 2025թ.
N _____ հրամանի

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 28

**Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի նիստի**

01.12.2025թ. ք. Երևան

2025թ. նոյեմբերի 24-ին ժամը 14:00-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի

| | |
|---|---|
| նախագահ՝ | Ա. Սիմոնյանը |
| քարտուղար՝ | Պ. Գալստյանը |
| անդամներ՝ | Ա. Խաչատրյանը |
| | Տ. Գասպարյանը |
| | Գ. Խաչատրյանը |

***<u>Օրակարգում՝</u>***

Գեղարքունիքի մարզի Գավառ, Սևան և Ճամբարակ, Մարտունի և Վարդենիս տարածաշրջանների միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2025 թվականի նոյեմբերի 24-ի մրցույթի արդյունքների ամփոփումը:

***Արձանագրվեց՝***

1. «Ավտոփայլ», «Ռաֆ և Էլ», «Գավառտրանս» ՍՊ ընկերությունները ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով և Մրցութային հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 18-ի հատուկ նիստի թիվ 26 արձանագրությամբ սահմանված ժամկետում իրենց կազմակերպությունների հաշվեհամարներից ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած հաշվեհամարին փոխանցել են մրցույթ անցկացնելու մասին հայտարարությամբ սահմանված քանակով ավտոբուսների ընդհանուր արժեքի 2.5 տոկոսին համարժեք գումարը:

2. Գեղարքունիքի մարզի Սևան և Ճամբարակ տարածաշրջանների միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2025 թվականի նոյեմբերի 24-ի մրցույթի արդյունքում «Ավտոփայլ» ՍՊ ընկերությունը հավաքել է 46,3 միավոր՝ համաձայն մրցութային ամփոփ թերթիկի:

3.Գեղարքունիքի մարզի Սևան և Ճամբարակ տարածաշրջանների միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2025 թվականի նոյեմբերի 24-ի մրցույթի արդյունքում «Ռաֆ և Էլ» ՍՊ ընկերությունը հավաքել է 40 միավոր՝ համաձայն մրցութային ամփոփ թերթիկի:

4.Գեղարքունիքի մարզի Գավառ տարածաշրջանի միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2025 թվականի նոյեմբերի 24-ի մրցույթի արդյունքում «Գավառտրանս» ՍՊ ընկերությունը հավաքել է 52 միավոր՝ համաձայն մրցութային ամփոփ թերթիկի:

5.Գեղարքունիքի մարզի Մարտունի և Վարդենիս տարածաշրջանների միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2025 թվականի նոյեմբերի 24-ի մրցույթին որևէ հայտ չի ներկայացվել:

***Քննարկվեց՝***

1.Գեղարքունիքի մարզի Սևան և Ճամբարակ տարածաշրջանների միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2025 թվականի նոյեմբերի 24-ի մրցույթի մասնակից «Ավտոփայլ» ՍՊ ընկերությանը հաղթող ճանաչելու հարցը:

2. Գեղարքունիքի մարզի Սևան և Ճամբարակ տարածաշրջանների միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2025 թվականի նոյեմբերի 24-ի մրցույթի մասնակից «Ռաֆ և Էլ» ՍՊ ընկերությանը հաղթող չճանաչելու հարցը:

3.Գեղարքունիքի մարզի Գավառ տարածաշրջանի միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2025 թվականի նոյեմբերի 24-ի մրցույթի մասնակից «Գավառտրանս» ՍՊ ընկերությանը հաղթող ճանաչելու հարցը:

***Որոշվեց՝***

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 11-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի (Այսուհետ՝ կարգ) 9-րդ կետի 5)-րդ ենթակետի, 49-րդ և 64-րդ կետերի, 66-րդ կետի 2)-րդ ենթակետի պահանջներով՝

1. Գեղարքունիքի մարզի Սևան և Ճամբարակ տարածաշրջանների միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2025 նոյեմբերի 24-ի մրցույթի արդյունքում առավելագույն միավոր հավաքած «Ավտոփայլ» ՍՊ ընկերությանը ճանաչել հաղթող 10 (տասը) տարի ժամկետով հետևյալ տրանսպորտային միջոցներով՝

2025թ. արտադրության 36 (երեսունվեց) Գազել Նեքստ A68R33 մակնիշի, որից 4 միավորը հարմարեցված հաշմանդամություն ունեցող անձանց համար,

և ըստ երթուղիների՝ մեկ ուղևորի համար առաջարկված հետևյալ փոխադրավարձերով՝

| Հ/Հ | Երթուղու անվանումը և համարը | Փոխադրավարձը, դրամ |
|---|---|---|
| 1. | **Սևան-Երևան** | **1000** |
| 2. | **Սևան-Հրազդան** | **500** |
| | Սևան-Ծաղկունք | 200 |
| | Սևան-Դդմաշեն | 300 |
| | Սևան-Զովաբեր | 400 |
| 3. | **Սևան-Գավառ** | **700** |
| | Սևան-Չկալովկա | 300 |
| | Սևան-Նորաշեն | 300 |
| | Սևան-Ծովազարդ | **400** |
| | Սևան-Լճափ | **400** |
| | Սևան-Բերդկունք | **500** |
| | Սևան-Հայրավանք | 500 |
| 4. | **Սևան-Գագարին** | **300** |
| | Սևան-Վարսեր | 200 |
| | Սևան-Գեղամավան | 250 |
| 5. | **Սևան-Զովաբեր** | 400 |
| | Սևան-Ծաղկունք | 200 |
| | Սևան-Դդմաշեն | 300 |
| 6. | **Սևան-Սեմյոնովկա** | 400 |
| | Սևան-Ծովագյուղ | 300 |
| 7. | **Սևան-Վարսեր** | **200** |
| 8. | **Սևան-Գեղամավան** | **200** |
| 9. | **Սևան-Թերակղզի** | **300** |
| | Սևան-Ցամաքաբերդ | 150 |
| 10. | **Սևան-Նորաշեն** | **300** |
| | Սևան-Չկալովկա | 200 |
| 11. | **Սևան-Լճաշեն** | **200** |
| | Սևան-Վարսեր | 200 |
| 12. | **Ճամբարակ-Երևան** | **1500** |
| 13 | **Ճամբարակ-Անտառամեջ** | **500** |
| | Ճամբարակ-Թթուջուր | 200 |
| | Ճամբարակ-Գետիկ | 250 |
| | Ճամբարակ-Մարտունի | 300 |
| | Ճամբարակ-Այգուտ | 350 |
| | Ճամբարակ-Դպրաբակ | 400 |
| | Ճամբարակ-Ձորավանք | 450 |
| 14 | Ճամբարակ-Ծափաթաղ | 600 |
| | Ճամբարակ-Շողակաթ | 300 |
| | Ճամբարակ-Արտանիշ | 400 |
| | Ճամբարակ-Արտաշավան | 400 |
| 15 | **Ճամբարակ-Վահան** | **200** |

2.«Ռաֆ և էլ» ՍՊ ընկերությանը հաղթող չճանաչել Գեղարքունիքի մարզի Սևան և Ճամբարակ տարածաշրջանների միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով

ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2025 նոյեմբերի 24-ի մրցույթում՝ համաձայն կարգի 49-րդ հոդվածի պահանջով:

3. Գեղարքունիքի մարզի Գավառ տարածաշրջանի միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների

ընտրության 2025 նոյեմբերի 24-ի մրցույթում հաղթող ճանաչել «Գավառտրանս» ՍՊ ընկերությանը 10 (տասը) տարի ժամկետով հետևյալ տրանսպորտային միջոցներով՝

2025թ. արտադրության 26 (քսանվեց) Գազել Նեքստ A68R33 մակնիշի, որից

3 միավորը հարմարեցված հաշմանդամություն ունեցող անձանց համար,

և ըստ երթուղիների՝ մեկ ուղևորի համար առաջարկված հետևյալ փոխադրավարձերով՝

| Հ/Հ | Երթուղու անվանումը և համարը | Փոխադրա-վարձը, դրամ |
|---|---|---|
| 1. | **Գավառ-Երևան** | **1400** |
| 2. | **Գավառ-Սևան** | **800** |
| | Գավառ-գ. Հայրավանք | 300 |
| | Գավառ- գ. Բերդկունք | 300 |
| | Գավառ - գ. Լճափ | 400 |
| | Գավառ - գ. Ծովազարդ | 400 |
| | Գավառ - գ. Նորաշեն | 600 |
| | Գավառ - գ. Չկալովկա | 600 |
| 3. | **Գավառ-գ. Գեղարքունիկ** | **300** |
| | Գավառ-գ. Գանձակ | 250 |
| | Գավառ- գ. Սարուխան | 300 |
| | Գավառ - գ. Լանջաղբյուր | 300 |
| 4. | **Գավառ-գ. Ծաղկաշեն** | **300** |
| | Գավառ-գ. Հացառատ | 200 |
| 5. | **Գավառ- գ. Սարուխան** | **300** |
| | Գավառ-գ. Կարմիրգյուղ | 200 |
| 6. | **Նորատուս-Գավառ** | **300** |
| | Նորատուս-գ. Արծվաքար | 200 |
| 7. | **Ծովազարդ-Գավառ** | **400** |
| | Ծովազարդ-գ. Լճափ | 300 |
| | Ծովազարդ-գ. Բերդկունք | 300 |
| | Ծովազարդ-գ. Հայրավանք | 300 |

4. Գեղարքունիքի մարզի Մարտունի և Վարդենիսի տարածաշրջանների միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ

իրականացնող կազմակերպությունների ընտրության 2025 թվականի նոյեմբերի 24-ի մրցույթը համարել չկայացած:

5. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հաստատմանը ներկայացնել սույն արձանագրությունը:

Մրցութային հանձնաժողովի
նախագահ՝ Ա. Սիմոնյան

քարտուղար՝ Պ. Գալստյան

անդամներ՝ Ա. Խաչատրյան

Տ. Գասպարյան

Գ. Խաչատրյան